

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԱՇԻՐԷ, Ապահ փողոց

ՄՈՒԴԱԹՈՒՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԵՄԵՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

ՄԷԿ անգամի համար տողը 3 ՂՐՋ. ողջ.
ՄԷԿ անգամի առեր ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱՃԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	ՂՐՋ. ողջ	100
Վեցամսեայ	»	55
Եռամսեայ	»	30


ՕՏԱՐ ԵՐԿՈՐԵՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան	Ֆր.	26
Վեցամսեայ	»	14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒՄ

ՈՒՆԻ ԵՂՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՔԵԱԲԻ, ՀԻՆԳԵԱԲԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՏՃՈՐԵՆԻՄԱԳԻՐ Յ. ԱՂԵԽԱՆ

Ա. Զ. Գ.

Թերթիս բաժանորդագրութիւնը
Մանսափոսքով կամ փոխանակա-
գրով պէտք է ղրկուին հետեւեալ
հասցեին:

Direction du journal PHAROS
LE CAIRE, Egypte

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԱՂԵԽԱ. ԹԱՂ. ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆ

Ժամանակէ մ'ի վեր Աղեքսան-
դրիոյ մեր պատուական գրացիները՝
կը պաշարին իրարու հետ ազգային
ինչ ինչ խնդիրներու վրայ. այս պայ-
քարը արձագանգ գտած է նաեւ հայ
և օտար լրագրիւններու մէջ և կը ցա-
ւինք քսել որ վիճարանութիւնը փո-
խանակ միայն յազուաժամ խնդիրնե-
րուն և սկզբունքներուն շուրջը դառ-
նալու, իր սահմանէն դուրս ելած,
բուն կիրքերու տեղի տուած, և հին
ու նոր հաշիւներ մարբելու միջոց մը
եղած է դժբաղդարար. Ասկէ յառաջ
եկած է անախորժ և ձգտեալ վիճակ
մը, որ մինչև անգամ ազգած է մեր
Աղեքսանդրիաքնակ ազգայիններուն
իրարու հետ ունեցած ընտանեկան և
առեւտրական յարաբերութեանց վրայ:

«Փարոս» իր անկախ և անկողմնա-
կալ թերթի հանգամանքով, պարտա-
կանութիւն կը համարի իրեն՝ զբաղիլ
այդ խնդիրներով, երկու կողմանէ
գրուածներն ուշի ուշով կարգադրած,
ազգային Սահմանադրութեան տես-
րակը աչքի առչել ունեցած և իրաց
կացութիւնը, իր տնօրէնին միջոցաւ,
անձամբ ուսումնասիրած ըլլալով յԱ-
ղեքսանդրիա, ուր իջած էր ան, յատ-
կապէս այս նպատակաւ:

Սկսինք ուրեմն:
Վէճը սա՝ հետեւեալ կէտերուն վրայ
կը կայանայ.

1. Աղեքսանդրիոյ ազգային վիճա-
կը կատարելապէս համաձայն է ազ-
գային Սահմանադրութեան, թէ ոչ:
2. Հիմնական թաղ. խորհուրդը

Սահմանադրութեան համեմատ ընտ-
րուած է, թէ ոչ:

3. Այս թաղ. խորհուրդը 1899
ապրիլին ընտրուած թաղ. խորհուրդն
է, թէ տարբեր մարմին մը:

4. Վսեմ. Պօղոս փաշայի մշտական
Ատենապետի հանգամանքը Սահմա-
նադրութեան համաձայն է, թէ ոչ:
Մենք կարգաւ այս հարցումներուն
պատասխանելէ յետոյ՝ պիտի յայտ-
նենք մեր դիտողութիւններն ու կար-
ծիքները, որոնք մեր խորունկ հա-
մոզման համաձայն պիտի մատնանշեն՝
վէճի առարկայ եղող խնդիրները լա-
ւագոյն կերպով լուծելու ճամբան:

1. «Աղեքսանդրիոյ ազգային վիճա-
կը համաձայն է Ազգ. Սահմանադ-
րութեան, թէ ոչ»:

Այս հարցումին պատասխանը տա-
լու համար՝ մէջ կը բերենք նոյնինքն
Սահմանադրութեան 42րդ. յօդուա-
ծին մէջ հաստատուած, որ կը գտնուի
թաղական խորհուրդներու պաշտօնը:

«Թաղական խորհուրդին պաշտօնն
է՝ թաղին ժողովրդեան ազգային դո-
ծոց մատակարարութիւնը, Եկեղեցւոյ
և դպրատան հոգաբարձութիւնը և
ազգայնոց մէջ պատահած վէճերու
քննութիւնն ու խաղաղարարութիւնը»:

Յճրդ. յօդուածն ալ կը տրամադրէ՝

«Թաղական խորհուրդները՝ իրենց
պաշտօնին վերաբերեալ գործոց մէջ
Տեսուչ խորհուրդներուն հետ ուղղա-
կի յարաբերութիւն ունին, այսինքն
դպրատանց համար՝ Ուսումնական
խորհուրդին հետ, տնտեսական և զրա-
մական գործոց համար՝ Տնտեսական
խորհուրդին հետ, դատի վերաբերեալ
գործոց համար՝ Դատաստանական
խորհուրդին հետ: Եւ ասոնց ամեն
մէկին՝ որոշեալ ժամանակներ, համար
պիտի տան իւրաքանչիւրին վերաբե-
րեալ գործոց համար»:

Ինչպէս կ'երևի մէջ բերուած յօդ-
ուածներէն՝ Սահմանադրութիւնը թա-
ղական խորհուրդի մը իրաւունք կու-
տայ միայն թաղին ժողովրդեան ազ-
գային գործոց մատակարարութիւնը,
հետեւեալ թաղական խորհուրդ մը
իրաւունք չունի վիճակին ընդհանրու-
թեան վերաբերեալ գործոց տնօրէ-
նութեանը մասնակցելու. ինչպէս ա-
ռաջնորդի ընտրութեան, որ Գաւա-
ռական Ընդհանուր և Քաղաքական

Ժողովոց իրաւասութեան կը պատկա-
նի Սահմանադրութեան 1, 2, 3, 4
և 97 յօդուածներու համաձայն:

Արդ ամենուն յայտնի է թէ Աղեք-
սանդրիոյ թաղական խորհուրդը Ե-
գիպտոսի վիճակին ընդհանրութեան
վերաբերեալ գործոց կը մասնակցի:

Դարձեալ թաղական խորհուրդ մը,
ինչպէս տեսանք, պէտք է համարա-
տու ըլլայ դաւառին Ուսումնական,
Տնտեսական և Դատաստանական խոր-
հուրդներուն ու Աղեքսանդրիոյ Պատ.
Թաղական խորհուրդը ո'չ միայն հա-
մար չտար մէկուն, այլ և Աղեքսան-
դրիոյ համար ինք կը կատարէ իր
համարառու Ուսումնական, Տնտե-
սական և Դատաստանական խորհուրդ-
ներուն և մինչև իսկ Քաղաքական և
Ընդհանուր Ժողովներու պաշտօնն.
զոր օրինակ, Սահմանադրութեան 46-
րդ. յօդուածի մէջ հաստատուած տրա-
մադրութեան հասաձայն՝ «Ազգային
ոեւէ կալուածոց գնումն ու վաճա-
ռումը չկրնար տեղի ունենալ, առանց
Տնտեսական խորհուրդի գիտութեան,
Քաղաքական Ժողովոյ հաճութեան
և Պատրիարքի (Գաւառաց մէջ Առաջ-
նորդի, Սահմ. յօդ. 98) կնիքով հաս-
տատութեան: Սակայն ինչպէս ամե-
նուն յայտնի է, այդ կարգի բոլոր
դործողութիւններն Աղեքսանդրիոյ
թաղական խորհուրդն ինք կը կատա-
րէ ինքնագլուխ, թերեւ միայն Առաջ-
նորդին հաւանութիւնը ստանալով,
այն ալ եթէ զանաւի վիճակին մէջ:

Բայց Սահմանադրութեան բացո-
րոշ տրամադրութեանց առջև, այս-
չափը բաւական չէ, ինչպէս տեսանք:
Քննենք արդ թէ Սահմանադրու-
թիւնը ինչ պարտականութիւն կը
դնէ ժողովրդին վրայ: Յճրդ. յօդ-
ուածը կ'ըսէ թէ թաղին ժողովուրդը
«Թաղական տուրք պէտք է տայ»:
91րդ. յօդուածն ալ կը տրամադրէ
թէ բաց ի այդ թաղական տուրքէն,
պէտք է չափահաս ու վատտակի և
չահու տէր ատեն ազգային անհատ,
տուրք վճարէ ընդհանուր ծախուց
համար, որ Պոլսոյ մէջ Պատրիար-
քարանը ու Գաւառաց մէջ Առաջնոր-
դարանները կը դանձեն իրենց սըն-
տուկներուն համար:

Աղեքսանդրիոյ Պատուարժան Թա-

ղեցիները ազգային տուրք կը վճա-
րեն: Ոչ:

Հետեւեալ մէջ բերուած այս Սահ-
մանադրական տրամադրութիւններուն
և անխտելի իրողութիւններուն հան-
գէպ՝ բնաւ տարակոյս չկայ թէ յօդ-
ուածիս սկիզբը արուած առաջին հար-
ցումին պատասխանը բացասական է,
այսինքն թէ՛

Աղեքսանդրիոյ ազգային վիճակը
Ազգային Սահմանադրութեան համա-
ձայն ըլլալէ շատ հեռի է:

(Շարունակելի)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱԳՆ Ի ԹՈՒՐԻՔԻԱ

Կ. Պոլսէն Սեպտեմբեր 19 թուականաւ
կը գրեն:

«Մարգարէ ըլլալու պէտք չկայ գուշակե-
ու համար թէ ներկայ տագնապը երկայն
չի կրնար բռն և թէ շատ մօտ ենք տըն-
տեսական մեծ աղէտի մը որ, ուզէ՛ չուզէ՛,
քաղաքական ծանր խանաշփոթութիւններ
յառաջ պիտի բերէ:

Իր յանցաւոր անհոգութեան հետեանօք,
իր յոյս վարչութեան մէջ գործուած անհա-
մար զեղծումներուն բերմամբ, Օսմանեան
կառավարութիւնը այսօր հետեւեալ երկայն-
րաբանութեան առջև կը գտնէ ինքզինքը՝
կամ անօթութենէ մեծնիլ, և կամ կայսրու-
թիւնը պատառ առ պատառ ծախել սեղա-
նաւորական ընկերութիւններու, ճիշդ ինչ-
պէս հարուստի մը դաւակը, բռնի բռնի
իր հօրենական ժառանգութիւնը կը ծախէ՝
վաշխառներուն:

Բարենորոգում... մտքէ անգամ անցնե-
լու չէ, թող այս Սուլթանին յաջորդէ ու-
րիշ մը, թող իր շուրջը գտնուողները մէկիկ
մէկիկ անհետանան, և ասոնց տեղը ուրիշ-
ները բռնեն, դարձեալ իրաց վիճակը ինչ
որ է նոյնը պիտի մնայ. զեղծումները նուազ
մեծ չպիտի ըլլան, միայն օգտուողները պի-
տի փոխուին, առ չէ՛: Նայն իսկ յեղափո-
խութիւն մը դարման մը չի կրնար բերել,
որովհետեւ ասիկայ անիշխանութեան սերմե-
քը պիտի ցանէր և կամ հակառակ պարա-
գային, անկայուն վիճակ մը պիտի ստեղծէր:
Այսօր թուրքիա այնքան նեղն է որքան
ասիկէ հարիւր տարի առաջ, Սուլթան Մահ-
մետի զահակալութեան օրով. սա տարբե-
րութեամբ որ այն ատեն իրենց մէջ կամ-
քի տէր, խելացի մարդիկ կը գտնուէին և
թէ ապիկար կառավարութեան մը նուա-

տացուցիչ ազդեցութիւնը այնքան բնականօրէն չէր այսօրուան պէս: Ո՞ր գտնանք այսօր Ենիշէրթիւնը մէջտեղէն վերցնող այդ ինքնակալին քիչ թէ շատ հասարակող մէկը:

Ինչ որ սակայն հիացում կը պատճառէ մեզի, այն ալ այն համբերութեամբ, համակերպութեամբ և ճակատագրապաշտութեամբ է որով թուրք պաշտօնեաները կը տոկան որ գրեթէ ոչինչ տրուի իրենց իրենց ամսական:

Ահաւասիկ պաշտօնեաներ որ հինգ ու կէս ամսուան մէջ միայն մէկ քառորդ ամսական ստացան և բնաւ չի բողոքեցին, լըռիկ մնալով նստան տեղերին: Աւելին կայ, երբ քառորդ ամսական մը կը սենց, աս ալ ըսելու եղանակ մըն է, որովհետեւ եթէ այդ ամսականի մը քառորդին վրայ վար դրուած մասերը հաշուենք, հնչին զրամ ըլլալով ոչինչ կանցնի այդ խեղճերուն ձեռքը: Հանգստեան թոշակի անտուկին համար 5 % , Հիմնադր երկաթուղիին համար 10 % , Պիկայի հրկիզեալներու և Բէրլէնի ողողեալներուն ի նպաստ 4 % . Այսպիսով մէջ կառուցութեան թուրք վարժարաններուն համար 2 % . Ընդ ամենը 21 % . և ասիկայ ալ ոչ թէ իրապէս վճարուած գումարին վրայէն, այլ պաշտօնեային ամսականին գումարին համեմատութեամբ, այնպէս որ այն պաշտօնեան որ հազար դրուշ ամսական ունի, այդ ամեն % -ին չեմ գիտեր քանիները վար դրուելէն ետքը, ճիշտ 40 դրուշ կ'ստանայ:

Սուլթանին գահակալութեան տարեկարձին առթիւ, Երլարդի մէջ, ապահով էին որ Ռէփիկ փոխ տալիք 160,000 ոսկիով կարող պիտի ըլլային կառավարական պաշտօնեաներուն մէկմէկ ամսական վճարել: Բայց յայտնի պարապը ելաւ, որովհետեւ Ռէփիկ այդ գնդին ոսկիները ցնծալու միջոցին, անանկ պահանջներ մէջտեղ դրաւ — իր մենաշնորհին երկարումը, զոր օրինակ — որ կառավարութիւնը խոհեմութիւն չի սեպեց ընդունիլ, մտածելով որ չէր արժեք քանի մը հարիւր հազար ոսկիի համար — կաթիլ մը՝ ովկէանին մէջ — դայթակողութիւն մը յառաջ բերել որ կրնար ժողովրդեան ոտը ելլելովը վերջանալ: Եւ մտածածուն պէս ալ եղաւ. Հալէպի մէջ ժողովուրդը զինու զօրութեամբ զիսկալեց Ռէփիկ գործակալներուն, որոնք հաւատարմօրէն խուզարկութիւններ կը կատարէին մաքսանոցութիւններ փնտռելու նպատակաւ և որոնք կարշակէին պզտիկ տարածութեամբ արտաւար մը — ուր ծխախոտ մշակուած էր: Այս կողմին մէջ քանի մը հոգիներ մեռան:

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (4)
ԺԵՂԱՆ ՏԻՎՐԷՅ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ
ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇԵՉՈՒԱՆ ՎԷՊ
ԳԼՈՒԽ Ա.

Մարմինը գաճաճի մարմնայ մը խեղճութիւնը, կիսկատարութիւնը կ'ընծայէր, ալ աւելի ահոնքի, ալ աւելի անհամեմատաչափ եղած մատերուն հաստութեամբ և ոտքերուն լայնութեամբ:

Այս անշնորհք ամբողջութեան տէրը Եւրոպական տարազ հագած էր, մաքարտազոյն հագուած մը որ բոլորովին ծաղրելի կընէր զայն, չքեղ ազամաններ կը փայլէին մատներուն վրայ:

և շատեր վիրաւորեցան: Վալին հեռագրով ծանոյց Պալատին թէ ժողովուրդը յեւտին աստիճան զրգուած էր Ռէփիկի դէմ, որուն նպատակն է տեղական ծխախոտի մշակութիւնը փճացնել և կը յաւելու թէ՛ եւ թէ՛ Ռէփիկ մէջտեղէն չվերցնի, ապագայ շփոթութեանց համար պատասխանատուութենէ զերծ կուզէ մնալ, որովհետեւ կանոնաւոր զօրքերը չպիտի ուզեն միջամտել եւ թէ ժողովրդեան և Ռէփիկի դէմքերու միջև նորէն կոխ մը ծագի:

Այս ամենը սակայն բնաւ մտահոգութիւն չի պատճառեր Ռէփիկին. որքան որ դէպքերը շարաքուշակ ըլլան ապագային համար, անոնք կը մտածեն թէ կառավարութիւնը, ստիպողական պէտքերէ մղուած, և անճարակ՝ որնէ խնայողութիւն մը ընելու, ուզէ չուզէ Ռէփիկին պահանջութեանը գոհացում պիտի տայ, գոնէ առօրեայ զրպանի ստակը ճարելու համար:

Ռէփիկին բռնած ընթացքը ապահովապէս յիմար ընթացք մը չէ, բայց այսուամենայնիւ բոլորովին ալ բացարձակ չի կրնար ըլլալ: Այս սեղանաւորները որ թուրքիոյ երկու ոտքերը մէկ կաշիկի մէջ դնելով, պարբերաբար ստակ մուրաւու հարկին մէջ գրին և իրենց զրամով թն թիկունք եղան իրեն, իրաւունք ունենալ կը կարծեն ուզածին ընելու, քանի որ իրենց հետ գործ ունեցող մարդիկը կը բանակցին, կը շահագործեն և կը գողնան:

Պէտք չէ սակայն մոռնալ թէ շատ անգամ անօթութիւնը՝ գայլը անտառէն դուրս կը հանէ, և կառավարութիւնը նեղը գնելով՝ ուղուած զինուորականները ընդունել տալ մտադրուած միջոցնուն, կրնայ պատահիլ որ գայլերու անհամար վնասին մը կատարուի մէջտեղ ելնէ, և փաթթուի կ'եւալուրներու վրին:

ՇՈՎՄՈԳ ՏՈՂԵՐ

Ալպովի մը մէջէն քաղուած:
«Միայն մէջ ինչուսընդէր տեղի պիտի ճախսու եւ քան խոսքերը, հոտընդը տեղի պիտի ճախսու քան նայուածքը, բայց լուսնի շատ աւելի պիտի ճախսու է քան համբոյրը»:

Կիներ կան որ պատուաւոր են, որովհետեւ իրենց չէ ներկայացած անպատու ըլլալու ատիժը:

Ստատաններուն ամենէն վախճանները եղջիրաւորներն են: Սակայն, զարմանալի

Ան դեռ խօսք մը չ'արտասանած՝ կառապանը ծրարուած՝ զէպ ի վար ծոած էր և աղջկանը ըսաւ:

— Մի վախար, օրիորդ, փաշային միմոսն է:

Միմոս մը... Ժերմէնին հաւատարմը չէր գար... Միմոս մը, հող, իր աղջկը, բացօթյն զգեստով... անէ, այլանդակ, նման այն ասորոքինակ գէմքերուն զոր միջին դարը պահած է մեզ իր չէսքերուն պատի խողովակներուն մէջ:

Ինչ միջավայրի, ինչ ընկերութեան մէջ պիտի մտնէր ուրեմն:

Սակայն գաճաճը անոր ուղղուած յուսահատեցուցիչ քաղաքավարութիւն մը ցոյց կուտար, բարի գայլուտ մարմնով անոր այնպիսի ճոխ բացատրութիւններով, այնչափ առատահոս փոխաբերութիւններով, որ ուրախութենէն կը խայտար Մարկան աղա,

է, երբ կին մը ստատանայ է... Երկուսը ճակտին վրայ կը բուսնի, զիտա՞ծ էր:

Մէկ տոնէն, սէլը կողմ էր, հիւսյ կողմ... ամուսիններն են:

Ինչ տարբերութիւն կայ Մանիկի ծովին և հայ խորագրին միջև:

Մանիկ միշտ ալիք ունի, իսկ խորագրը... տալիք:

Նաւանուէի մասին. — Ամուսնուի ետեւ երկաթեայ շղթային տուալին ոսկի օղակը:

Անցողիկի խրատ մը... Բեռնորդիոյ:
Որքեմպի, չըլլայ սը կնիւն մը զարմէն նայն իսկ վարդով մը... Լուսնային բանի մը կրնաս նործածել զայն:

Ուրիշ խրատ մը... մեր ընթերցողներուն:

Կուզէ՞ք երջանիկ ապրիլ:
Մի խմբէր երբէք թիւթիւնին թայք, Թող ձեզ չի յուզէ ձեր կնկան լոյքը, Տուր մի խօթէք մարդերուն ցածը, Գոցեցէք շուտով պիւտեհներէ լոյքը, Եւ կերէք մինտի... Բիւծըլին հայրը:

ԱՍ-ՈՒ-ԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԽԱՐՀԵՆ

Ըստ Ամերիկեան Սահմանադրութեան, Պ. Ռուզվելթը՝ Ամերիկայի փոխ-նախագահն է որ Միացեալ Նահանգներու նախագահ պիտի ըլլայ մինչև որ հանգուցեալ Մաք Բիւնդի վերընտրութեան (1901 մարտ 4) շրջանը լմնայ:

Միացեալ Նահանգներու նախագահը 10,000 ոսկի կ'առնէ տարեկան: Միացեալ Նահանգաց մէջ պէտք է ծնած ըլլայ ան ու 35 տարին լրացուցած: Դաշնադրութեան գրած օրէնքներուն դէմ յիշթօի իրաւունք ունի. բայց հակառակ այս յիշթօին, օրէնքը գործադրելի կը մնայ երբ քուէի դրուի Դաշնադրութեան կողմ ու քուէն կորսնցընէ:

Միացեալ Նահանգաց Նախագահը՝ Ջին. Էրալան և Երմային զօրութեանց ընդհանուր հրամանատարն ալ է մինչոյն ժամանակ:

սե ներքինին, որ բազմոցէն վար իջնելով՝ մօտ էր նոր վաթճուհիին թնէն բռնելու:

Դժբաղդաբար՝ Ժերմէն բառ մը թուրքերէն չէր գիտեր, և ճիւղին իրեն ուղղած քաղաքավարական խօսքերը չէին կրնար անոր ակնկալած արդիւնքը ունենալ:

Կեղծելու անվարժ ըլլալով, աղջիկը չկըրցաւ ինքզինքը բաւական զսպել որ յայտնի չընէ անոր տղեղ մարմնոյն իրեն ազգած քաղաքական գարշաւքը. անցաւ անոր առջեւ, շատ ցրտութեամբ, հազիւ պատասխանելով այն խորին յարգական բարեկէր զօր իրեն կուտար, և իր սիրուն գէմքին վրայ դեռ պահելով առաջին վայրկեանին անխորհուրդ երկիւղը, անմիա զարհուրանքով:

Երբ Մորկան Ապային առաջնորդուած՝ անհետացաւ, գաճաճը ետէն չար նայուածք մը արձակեց, անգուլթ ձգիւ մը անցաւ երեսին վրայէն:

Փոխ — Նախագահին տարեթոշակն է 2000 ոսկի. իրեն փոխանորդութեան տեսչութիւնն ալ Նախագահինն չափ է:
Երբեկոյտի մէջ նախագահութեան պաշտօնն ունի. ու երբ Նախագահական աթոռը թափուր մնայ սա կ'ըլլայ Միացեալ — Նահանգաց Նախագահը մինչև ընտրողութեան շրջանին լրումը: Եւ այս պարագային Երբեկոյտը կ'ընտրէ իրեն համար Նախագահ մը որու կը վճարէ տարեկան 1600 ոսկի:

Փոխ — Նախագահին բացակայութեան ատեն Ընդհանուր քարտուղարը կը կատարէ այդ պաշտօնը. և եթէ քարտուղարն ալ չ'ըլլայ, Խորհրդարանի վեց անդամները կը վարեն Նախագահութեան պաշտօնը, պայմանաւ որ ամենքն ալ բնիկ Ամերիկացի ըլլան ու 35 տարին լրացուցած:

Ուսընկերի օրէն մինչև հիմա 4 փոխ — Նախագահներ միայն Նախագահութեան բարձրացեր են, աթոռը թափուր մնալուն հետեւնոք: — Ճոն Թէյլըր 1841ին Ընդհ. հրամանատար Հարրիսոնի յաջորդեց. Միլլըրտ Ֆիլմոն 1850ին Ջաքարի Թէյլըրին. Անտոնի Ջոնսոն 1865ին Ապրամս Լինքոլնի և Արթիւր Չէսթըր Ապրամս Կարֆիլդի:

— Ամուսն 15ին Կ.Պօլսէ «Թայմզ»-ի կը հեռագրեն թէ՛ Չարին, Վիլհէլմ Կայսեր և Պ. Լուպէի հետ ըրած տեսակցութիւնը և մասնաւորապէս Չարին ու Լուպէի տեսակցութիւնը Սուլթանը մեծ մոտատանջութեան մէջ ձգած է: Համիտը հիմակ լաւ հասկցած է որ Եւրոպայի համբերութիւնը հատած և Դեսպանները յոգնած են այլ ևս ու թուրքիոյ վարչական ձեւին ալ չ'են կրնար հանգուածել:

Թուսիոյ Դեսպանը՝ Պ. Ջինովիէլ Լա. միտաօրֆ կոմսը տեսնելու համար Բարիզ պիտի երթայ:

— Ըստ «Թոփպուս» լրագրին՝ Մարգարիտա Թագուհին մօտերս՝ պիտի այցելէ Գերմանիա, Պէրիզա և Աւստրիա, Գոնթէն Միլիպիլիի ծածկանուան տակ:

— Կ. Պօլսէն կը հեռագրեն թէ Ռէշատ փաշա, երմտական նախկին նախարարը նորէն այլ նախարարութեան գլուխը անցած է փոխան Ջիւհիսի փաշայի որ կրթական նախարար անուանուած է:

Ասիկայ՝ պատճառ մը չէ սակայն որ անտուկը չի պահէ իր նախկին վիճակը:

— Իտալիոյ Վիլթթօր-Լամանուէլ Թագաւորը մասնաւորապէս յանձնարարած է, Պ. Ջանաւարելլիի, նոր օրէնք մը պատրաստել անիշխանականներուն դէմ:

— Օ՛ն տեսնենք, անարդ ըրիտսոնայ... գուցէ այս պաշտաւն գուրս չելլես այնչափ խրոխտութեամբ որչափ մտած ատենդ...:

ԳԼՈՒԽ Բ.

Նորաշէն պալատը անձայրափակ պարտեղի մը կեդրոնը կը դրուէր և երեք զըլխաւոր շէնք կը յօրինէր:

Ալ կողմը, իշխանին յարկաբաժինները, ուր կարելի էր մտնել հազիւ քանի մը ոտք ունեցողի մը անհաճ փերնափիկով մը պատրաստուած արտաքին սանդուղէ մը:

Ձախ կողմը կը տարածուէին ետեւ մասերը, խոհանոցներն ու վերջապէս, ներքին նիւներուն բնակարանը:

Խորը, կանանցը, կը կանգնէր՝ նայուածքներէ պատսպարուած ներքին գաւիթով մը, զոր կը պահպանէին բարձր պատ մը և երկու հաստաբեռն գունդեր:

—Պ. Մար Բինի իր կեանքը ապա-
հովարած է եղեր Միշուալ Լայֆ ընկերու-
թեան քով 200,000 ֆրանքի գումարի մը
համար։

Ողբացեալ նախագահը սակէ գատ գրեթէ
ոչինչ ձգած է իրեն հարստութիւնը։

—«Ռարէ» Բարիգեան թերթ մը,
Պոլսէն հեռագիր մը ըստացած է որ կիւմա-
ցիէն թէ Սուլթանին գաղտնի ուստիականու-
թիւնը մէջ տեղ հանած է գաւառականութիւն
մը որուն նպատակն է եղեր տնտեսութիւն
օլը հանել երկրորդի պալատը։

Ահաւորիկ լուր մը որ կը գտնուի ձեռ-
մարտութենէ հետք է, այսու հանգրձն սիրտը
կը կտորի երբ կ'իմանաս թէ . . . ստուէ։

—Պէկրատէն Սեպտ. 17ին «Օրօն»ի
քաշուած հեռագիր մը կը թէ ըստ Սլը-
պիական լրագրիւններուն «Երիտասարդ թուր-
քեր»ը Նիկի մէջ ժողով մը պիտի գումարեն
բողոքագիր մը պատրաստելու համար։ Ժո-
ղովին պիտի մասնակցի նաև Տամատ Մա-
մուտ բաշան։

Այս ժողովին մէջ պիտի վիճարանի
նաև Սերպիոյ և Մակեդոնիոյ կացութիւն
վրայ։

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Չինաստանի խնդիրը՝ այնքան քաշքշու-
ղէ ու շատ մը արեւմտահայ իրենքու տեղի
տալէ յետոյ՝ կարգադրուեցաւ վերջնական
Մեծ պետութեանց ներկայացուցիչները և
Լի-Հունցի-Չանի կառավարութիւնը ստո-
րագրեցին այն ատենագրութիւնը, զոր Չի-
նաստանի և Տէրութեանց միջև վերջնական
հաշտութեան մը ու խաղաղութեան վերա-
հաստատման գրաւականը պիտի ըլլայ։ Տէ-
րութիւնները յաջողութեամբ վերջնական հա-
մաձայնութիւնը, համաձայնութիւն մը որ
65 միլիոն անգլիական ոսկոյ վճարումը
ապահովելէն կտրուի և Չինաստան երե-
սուն երեք տարեկէն պիտի հետուցանէ այդ
գումարը։ Յիշեալ 65 միլիոնին հետ ապա-
հովարած է նաև՝ զէնք առ այժմ՝ նոր կո-
տորածներու վախ մը չըլլալը։ Ասիկա սա-
կայն արգելիչ չլինար ըլլալ որ Պոքրերը
գարձեալ, օր մը, ոտքի ելլեն իրենց երկ-
րին մէջ գտնուող օտարներուն դէմ։

Հաշտութեան ատենագրութիւնը տասներ-
կու յօդուածներ միայն կը պարունակէ։
Իրաւ է թէ Տէրութիւնները առաջնաւ չափ
խտապահանջ չեն գտնուած —ինչպէս կ'ե-
րեւի հաշտագրի յօդուածներէն— իրենց
պահանջներուն մէջ. բայց Չինացիք ինք-
զինքնին նուաստացած կը համարին թաքի-
տիւններն աքսորուելովը ու թաքստի ընդե-
րուն քանդուելովը։

Այս գումարէն մէկուն առջև, Ժերմէնի
եկած միջոցին, չորս երիտասարդ ներքինի-
ներ բազմութեամբ վրայ նստած, սովինօ կը
խաղային։

Երբ աղջիկը տեսն, սոր էլան և արե-
ւելեան սովորութեան համեմատ բարեկեցի-
ն, ձեռքերն կուրծքներուն, շրթունքներուն
և ծակադրուած տանելով։

Բայց Մորկան Ալա նշան մը ըրած էր
և արդէն ամենէն պզտիկը յառաջ նետուե-
ցաւ։

Հաստ գուռը բացուեցաւ, անցան, և երբ
բալը եկան, ազան վերնագաւթակի մը տալը
ոտքերն ելաւ արագ արագ, ու ապակե-
րուն մը առջև երեք անգամ ծափ զարկաւ։

Այս նշանին վրայ, կին մը յառաջացաւ,
նախ աղէկ մը նայելով որ մեծ գուռը գոց
էր. բալը իշաւ և Մորկան Ալայի հետ
թուրքերէն քանի մը խօսք փոխանակելէ
վերջ, Ժերմէնին նշան ըրաւ որ հետը գալ։

Չինու կառավարութիւնը խոստացեր է
ստանձնած պայմաններն ու բարենորոգու-
թիւնները խղճի մտօք կատարել։ Պոքրը-
ները հիմա կ'զգան թէ կատարեալ կազմա-
կերպութիւն մը չունին դեռ, ու հետեւաբար
տկար են։ Այս տկարութիւնը աւելի զգալի
կ'ըլլայ մանաւանդ երբ աչքի առջև ընդնը
իրենց յաղթուելը Չինե-Ճարմանական պա-
տերազմի ժամանակ, ու իրենց հանած չը-
փութութեան գոյութիւնը ներկայիս։ Ըստ Բունդ
Վան Վոլտերի կոմիտէի, Ռուսիոյ Չինաստանի
մէջ ունեցած ազդեցութիւնը ամենամեծ տեղը
կը գրաւէ. յետոյ Գերմանիա և ապա Անգ-
ղիա։ Դիւանագետին այս յայտարարութիւնը
—Անգղիոյ Չինաստանի մէջ մեծ ազդեցու-
թիւն մը չունենալուն համար— Լոնտոնի
թերթերէն շատերուն գեղձութեան առաւ-
կայ եղած է։ Չինական տագնապը վերջա-
ցած է, այս՝. բայց հաշտութեան ատենա-
գրութեան մը կնքուելը չնշանակելով թէ Ծայ-
րագոյն—Արեւելի խնդիրը լուծուած է։

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Փարոսի անցեալ շրջանի ընթերցողնե-
րը անշուշտ չեն մոռցած Լևոն Արամեան
անունը զոր ոտէկ կը տեսնէին բանաս-
տեղական գոհարներու ներքէ։

Լևոն Արամեան ծածկանուծին տակ,
բանաստեղծներու յատուկ բաժնեցումը մը՝
պահուողի կը սերէր։ Արամեան չ'անըմ-
եան, բաղաբիւ մէջ ծանօթ ընտանիքի մը
զաւակ, որ փարոսի գաղարուծին անմի-
ջապէս յետոյ Բարիգ մեկնեցաւ, Institut de
chimie appliqueeի մէջ մտնելու համար։
Մեր նախնիքն սիրելի աշխատակցը,
այսօր փառաւոր ընտանիքին մը հետք —
երկրորդ երեսուն աշակերտի վրայ — քի-
միագետի վկայականը կ'ստանայ և կը մտնայ
այն ապարելիք մէջ ուր Լալուազիները,
Վիլուցեր և Պէրքոյները փայլած են։

Անշուշտ մեր հետ կը խնդակցին իր բա-
րեկամները — և բազմաթիւ են ասոնք —
իւր այս յաջողութեան համար և ձեռքը
սեղմելով, սրտազին բարեմաղթութիւններ
կընեն ապագային համար և կը խնդրեն որ,
երկու ըմբիական փորձի մէջ տեղ, չի մոռ-
նայ նաև Փարոսը ուր իր աշխատակցու-
թիւնը խիստ սիրելի եղած էր որքան խմ-
բագրութեան նոյնքան ալ ընթերցողներուն։

ՏԻՐԱՇՈՒՆՉ ԽԱՂ ՄԸ

Օրէնսդրները երբ կախաղանի պատիժը
հաստատեցին, չէին կրնար երբեք երևակա-
յիլ թէ իրենց հնարած այդ սեռատուեր գոր-
յիլ, համակ ոսկի ու բիւրեղ մեծ ճիւղ
մը, Օպիստոնեան շատ ճոխ գորգ մը յա-
տալը կը ծածկէր, սալաքարերուն վրայ
յանհուն կրկնուած վարդի և ազուրուկի
առատաբուր փունջեր սփռելով։ Ասիկա ան-
գին գրուած մէկ քանի երկնադրուագեալ
սեպաններ ընդհանուր մերկութեան մէջ կար-
ծես կը կորսուէին։ Խաղաներկ պատերը
մանկան մարմնին լաքայակեալ վարդ գոյնը
ունէին։ Ստալներուն առջև, ձեռքները
գործ քողերով ծածկուած փոքրիկ սեղաննե-
րու վրայ կային տեսակ տեսակ մեղանկա-
ներ, սիլիկոն ծրարներ և լուցիկեռ փեր։
Գորգին վրայ՝ Ժերմէն նշմարեց անհե-
թեթ կերպարան մը զոր գտնուած անկիւ-
նին միջնադարէն չէր թողուր լաւ մը տես-
նել։ Բայց քիչ քիչ աչքերը ստուերին վար-
ժուեցան և այն ատեն, տարօրինակ արա-
րած մը իրեն երեցաւ։

Ընդարձակ հատուած մը տարաւ գայն,
տեսակ մը գահէն որ պալատին ամբողջ
երկայնութեանը մէջէն կ'անցնէր. խորը վեց
լայնատարր պատուհաններու ապակիներէն՝
Նեղոսը կ'երևէր՝ թաւալելով իր գորշ ջու-
րերը զոր այս միջոցին արեգակը արծա-
թափայլ հեռերով կը ճեղքուէր։

Մէջտեղը, լայն սահման մը որուն դի-
մացը կը տարածուէին շարք մը յարկա-
բաժիններ, որոնց լայնարաց ու վարագոյր-
ները վեր առնուած գունները կը թողուն
նշմարել մինչև վերջին հատուածը, կապոյտ
ու ոսկի փոքրիկ սրահ մը։

Գահէնէն մէջ, ճերմակ ծածկութիւնով
ծածկուած քառակուսի բովանդակ տեղը կը
բռնէին, հատուածը կը լեցնէին ու գայն
դատարի բազմութեան ընդարձակ պարա-
սրահի մը կը նմանեցունէին։

Առատադիր վրայ՝ տարակուսելի ճաշա-

ծիքը իրեն խաղաղի պիտի ծառայէր...
Պուլաքի լակտներն էին ձեռքը։

Անշուշտ անստի մը շուքներ, թնգա-
նոյններ, կառախուսներ, տուններ, պարտեզ-
ներ, ձիեր, կովեր, գինորներ, մարդեր,
ժամացոյցներ, սատանաներ, թագաւորներ,
էրկի—կնիկներ, թաղականներ խաղաղի
ձեռն վերածուած, Սաւ Միշ Սարիֆի
ցուցադրեցին լեցուն են անոնցմով։

Բայց, կախաղան մը իրեն պարզ խաղա-
լիք անստի էր երբեք։ Սակայն օրուան նո-
րութիւնն է այս... Յարաբ—Թրքական
խնդրէն անմիջապէս ետքը. մտիկ ըրէք
հիմա։

Անցեալ շարաթուան՝ կախաղանի տեսա-
կետով որքան բեղմնաւոր ըլլալը կը յիշէք.
կառավարութիւնը երբեք հոգի չունէր հա-
նեց, անցեալ կը կրկնէր, երեքշաբթի և
չորեքշաբթի օրերը։

Պուլաքի մէջ քանի մը ստահակներ ձանձ-
րացած... միշտուի օյնիկ խաղալը, ո-
րոշեր են, անցեալ օր, կառավարութեան
օրինակին հետեւի և խաղ մը սահողը որ
թէ այժմութեան և թէ նորոյթի տեսակէ-
տով տարբեր ըլլար մանուկներու յատուկ
սովորական խաղերէն։ Ուստի, séance te-
nante, իրենց ծրագրին անմիջական գոր-
ծագրութիւն մը տալ կ'որոշէին։ Եւ մէկ եր-
կու շրջան, գործի կ'սկսէին. նախ ծառի մը
մէկ ձիւղին չուան մը կը կապեն և յետոյ
իրենց ընկերներէն մէկուն ոտքերը և ձեռ-
քերը լաւ մը կապեն և ետքը, առօր վրին
կ'անցնեն չուանի մէկ ծայրը և միւս ծայ-
րէն կ'սկսին բաշել վեր, անբաղ յալան։

Հրճուեցին մեծ էր աս տղոց մինչև այն
վայրկեանը ուր, ալ խնդալէ յոյրած, որո-
շեցին տղան տղա տղան. բայց իրենց ու-
րախութիւնը ցաւի փոխուեցաւ երբ տեսան
թէ իրենց ընկերը, հակառակ իր տարիքին,
ընթերցան առած էր իրեն տրուած գիրը և
թող տուած է որ չուանը իր մահացու դե-
րը կատարէ։

Բաներ կան որոնց հետ կատակ չ'ըլլուիր.
կախաղանը ասոնցմէ է։

ՇԵՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր Տնօրէնը, խիստ զգածուած
իր պաշտօնակիցներու, բարեկամնե-
րու և համակրողներու կողմէ հասած
շնորհակարական նամակներէն և չի
կրնալով ամենուն ալ զատ զատ պա-
տասխանել, կը փութայ իր խորին
շնորհակալութիւնները յայտնել ամեն
անոնց որ համակրանքի տուերով,
շնորհակարաններն զինքը իր այս նոր
ձեռնարկին առթիւ։

Կով, համակ ոսկի ու բիւրեղ մեծ ճիւղ
մը, Օպիստոնեան շատ ճոխ գորգ մը յա-
տալը կը ծածկէր, սալաքարերուն վրայ
յանհուն կրկնուած վարդի և ազուրուկի
առատաբուր փունջեր սփռելով։ Ասիկա ան-
գին գրուած մէկ քանի երկնադրուագեալ
սեպաններ ընդհանուր մերկութեան մէջ կար-
ծես կը կորսուէին։ Խաղաներկ պատերը
մանկան մարմնին լաքայակեալ վարդ գոյնը
ունէին։ Ստալներուն առջև, ձեռքները
գործ քողերով ծածկուած փոքրիկ սեղաննե-
րու վրայ կային տեսակ տեսակ մեղանկա-
ներ, սիլիկոն ծրարներ և լուցիկեռ փեր։
Գորգին վրայ՝ Ժերմէն նշմարեց անհե-
թեթ կերպարան մը զոր գտնուած անկիւ-
նին միջնադարէն չէր թողուր լաւ մը տես-
նել։ Բայց քիչ քիչ աչքերը ստուերին վար-
ժուեցան և այն ատեն, տարօրինակ արա-
րած մը իրեն երեցաւ։

Ընդարձակ հատուած մը տարաւ գայն,
տեսակ մը գահէն որ պալատին ամբողջ
երկայնութեանը մէջէն կ'անցնէր. խորը վեց
լայնատարր պատուհաններու ապակիներէն՝
Նեղոսը կ'երևէր՝ թաւալելով իր գորշ ջու-
րերը զոր այս միջոցին արեգակը արծա-
թափայլ հեռերով կը ճեղքուէր։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆԵՐԿԻ ՀԵՌԱԳՐԵՐ

Շրջալի. 24 Սեպտ.— Յոյկոց մարդաս-
պանութեան սփրով ամբաստանուած է.
Վէլոյ հիւղաբերի պիտի արձակուի։

Լուսնի. 24 Սեպտ.— Նախալ առաջա-
ցող Պօլք զինուորները գեղի արեւելք և հիւ-
սիսային արեւելք վերադառնալ կը թուին։

Ամսոյս 16էն սկսեալ մինչև հիմա 45
պօլք մեծած կամ վերադառնալ են, 398
հոգի գերի բռնուած կամ անձնատուր եղած։
Լէյտանթներն կ'իմացունեն թէ Պօլքները
Սթանուէրներն և Եօքքըրտի միջև երթնե-
կող տասը վախճանները գէն զուրս հաներ
են։ Վեց զինուոր մեծած և 30 ձի սպան-
նուած են։

Բարիդ. 24 Սեպտ.— Ռուսական զոր փո-
խաւորութեան մը լուրը հրապարակաւ յայտ-
նելու համար, նպատաւոր առիթի մը
կ'սպասուի։

Բարիդ. 24 Սեպտ.— Ռուսական մերձած
է Թուրքիոյ՝ միջամտելու Յրանք—Թրքա-
կան խնդրին մէջ։

ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ԱՐԺԼԹՈՒԴԹԻ

Աղեքսանդրիա, 20 սեպտ.

Բրիտիլիթի	100	/—
Իւնիֆիէ	107	1/4
Տալիքա Սանիթ	103	/—
Տօմանալ	104	/—
Թրքական Բոնուօրիտ, սեփ Ե	26	93
Բուսնի երկաթուղի	3	Փր. 103
Բանալ տը Սիւէզ	372	/—
Բանալ տը Սիւէզ օպիլի	640	/—
Նաչ. պանք օֆ Էմբրթ Ա. Ո.	11	5/16
Աղեք. Թրամիլ (բրիլ.) Փր.	50	1/2
Աղեքսանդրիոյ Թրամիլ	30	/—
(աքսիոն տիլիտատ)	542	/—
Բրէտի Գոնիթ Էդ. աքսիոն	264	1/2
Գրէտի Գոնիթ 3 0/0	652	1/2
Աղեքսանդրիա Ա. Ո.	35	7/8
Թանթա	12	/—
Պէնէրայի անանուս ընկ.	48	/—
Ինքնուր մարքէթ օպիլ. 5 0/0	100	/—
» » աքսիոն	0.15	—
» » սոլթ ընտ սօտա	0.16	—
Նուսկովիլ Եօքքը	4.	/—

ԲԱՄՊԱԿ ԵՒ ԱՐՄՏԻԲ

ՔՕՆԴՐԱ

Աղեքսանդրիա, 20 սեպտ.

Բամպակ. Նոյ. Թայր.	9	27/32	/—
» Գոնիթ.	9	7/8	— 9/32
» Մարտ	10	1/8	— /—
Պիզէ. Նոյ. Գեկ. Գոն.	63	/—	/—
» Գեկ. մարտ	63	1/2	— /—
Բալլա. սեպ. հոկտ.	91	/—	/—
» Նոյ. Գեկ. յի.	92	1/2	/—

Պատու գերի մըն էր, փաշային մօրը
մտերմութիւն, քիչ մը բարեկամ. Հագած
էր բամպակե կաշակի մը շատ լայն, բայց
որոն լայնութիւնը չէր կարող պարփակել
թանձրամորթի անոր մարմնին հրէշաւոր
խոշորութիւնը։ Շատ պղտիկ և նուրբ դի-
մագիծերով, զուլըր ժամանակաւ գեղեցիկ
եղած ըլլալու էր, բայց այսօր ալլա բան
մը չէր մնացած անհետացեալ գեղեցկու-
թենէն։ Հինայաներկ կարծ կտրուած մա-
զերը ցանցաւ ծածկելով կ'իջնէին վիթ-
խարի պարանոցի մը վրայ, որ խորշով
ներով փոթ փոթ էր, զորս ծարպը չէր
կրնար անհետացնել։ Բիթը արծիւի կտու-
ցի պէս կորափիտ էր և վրան կը հանդ-
չէր կապոյտ ակնոց մը, որուն տակ աչ-
քերը անտեսանելի կը մնային։

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵՐԵՆՆ

Գ. ԵՒ Կ. ՄԵԼԻՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԻԹՆԵՐՈՒ

ԳԼԽԻՒՆ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԵՐԻԹԵ — ԳԼԽԱՌՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԻՆ ԶԱԲԹԻԹԻ ՇԵՆԲ

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ֆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՑՆԵԱԼ 1843 թ

ՊԱՀԵՍՏԻ ԴՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՁԻՄՆԻ

Ապահովագրական ամեն կարելի դրույթները կը գո ծաղրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագլուխ, ցման եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱԼ ԼԱՅՖԻ սակագինը և ապահովագրութեան զանազան դրույթները չուսումնասիրած մի՛ ապահովագրութիւն. — Առատութեան պայմանները
Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՉԻՍ և Ժ. ՎԱԼՖԻՇ, Ընդհ. ներկայացուցիչք:
Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալու Գ. ԵԿԱՒՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՁԻՄՆԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ 3 ԵԳԻՊՏՈՍ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԶԻՐԷ ԲՈՌ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:
Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր անանդներու վրայ:
Ֆրանսայի և օտար երկրներու վրայ կ'աւտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:
Կը գանձէ եգիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:
Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուրհակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻԾ
ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բերէա, Իզմիր, Միսիլի եւ Կ. Պոլիս:
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:
ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաները Բի-

րէա հանդիպելուն, Աթէնք այցելել:
ՍՈՒՐԻՈՅ ԳԻԾ.
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոն-Սայիա, Եսֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէնդերուն:
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղեքսանդրիա ամեն շաբաթի օր առաւօտեան ժամը 6ին:
Տասնընչից օրը անգամ մը՝ երթեւեկ կարմիր

Երբ Կեանքի նաւահանգիստներու միջև ձիճՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ
Ճամբորդութեանց և ապրանք համար դիմել ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բոն-Սայիա, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուրքի ամեն մասնաճիւղերուն:
1—1902

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՇԵԱՆ

—X—
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑԻ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԷՆԵՐՈՒ
ԳՈՀԻՐԷ, Մուսի փողոց,
Ս. և Ս. Սիսնաուի վաճառատան դէմը
Ապրանք զանազանութիւն
Երաշխաւորութիւն
Աժանութիւն
Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական
Փօնօկրաֆներու
Իմանօր: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի:
ԱՅՏԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խաղական հրամանագրով

23 Յունվար 1898

Դրամազուրիս Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.


Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր. Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եգիպտական Աղգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՄԷՋ

Կը տպուին ամեն լեզուէ հարսանեկան հրատարակութիւն, Տեղեկագրեր, Նաւակազմութիւն, Գրքեր, Տոմար, Հաշուեցոյցեր, Մահապարտութիւններ, Էսայի, Էսայի, ԱժԱՆ ԳՆԵՐՈՎ



ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՓՈԹՈՎ ԿԸ ԿԱՏԱՐՈՒՆ
50 % ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԵԼՈՎ

ԱՌԻՍՏԱՆԻԱՐՁԱՏՈՒՆ ՍԷՏԷՖՃԵԱՆ

Հիմնեալ ի Կ. ՊՕԼԻՍ 1882 թ

ՓՈԽԱՐԵԱԼ Ի ԳԱՀԻՐԷ 1898 թ

ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ — ՊԱՋԱՐ-ՍՈՒՐՈՒՐ

Այս ծանօթ լուսանկարչատան մէջ շատ խնամեալ և վերջին դրութեամբ կը պատրաստուին ամեն մեծութեամբ և ամեն տեսակ լուսանկարներ. կոռույիներ և ակրաւ-սիւրմաններ:

Դուրսը առնուելիք լուսանկարներու համար դիւրամաշնչի պայմաններ:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՇԱԿ
ԳԻՆԵՐՈՒ ՉԱՓԱՌՈՐՈՒԹԻՒՆ

ՔԻՆԾԸԼ ԵՒ ՍԻՍՏՈՆՍ

Հաստատեալ յամին 1860

ՀԱՅԱԳՈՐԾԷ-ՀԱՅԹԱՅԹԻՉԷ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ

Այս նշանաւոր փուլին մէջ կը պատրաստուին ամեն տեսակ հացեր, պիսիւրներ, եւ քէյքեր:

Այս փուլին մասնաւոր կառքեր կը շրջապային Գահիրէի ամեն թաղերու մէջ, ինչպէս նաև Զէյթուն և ի Հէյվան:

Թէվիզիլէ, Պուլաբի ճամբայ. ԳԱՀԻՐԷ
Թէվիզիլէ թիւ 504.

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Ս. ՇՈՒԷՐՏ

ԱՐՄԱՐ
ՊԱՅՄԱՆ
ԲԱՐԻՋ
1900

ՍՐԱՅՑ
ԿԻՆԵՐՈՒ
ԵՒ
ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ
ՀԱՆԴԵՐՁՆԵՐ
ԸՍՏ ՎԵՐՋԻ ՆՈՐԱՅԵՒՈՒԹԵԱՆ

ՉԱՓԱՌՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ